

ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ԵՎ ՄԱՐԴԻԿ ՉԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ
«ԿՐԱԿԵ ՇԱՊԻԿԸ» ՎԻՊԱԿՈՒՄ

Բանալի բառեր – Չապել Եսայան, «Կրակե շապիկ», պատում, ինքնակենսագրական վիպակ, կերպարակերտում, պատկերային համակարգ

Հայ գրականագիտության անկոխ արահետներից է Չապել Եսայանի պատումի ուսումնասիրությունը: Նրա կերտած ստեղծագործությունները ևս, պատմական ժամանակաշրջանով պայմանավորված, արժանացել են մերթ համընդհանուր ճանաչման և մեծարման, մերթ ենթարկվել են քննադատության ու արգելանքի, մերթ պարուրվել պատմության անթափանց շղարշով:

XIX դարավերջին և XX դարասկզբին արևմտահայ մամուլը բուռն հետաքրքրություն ցուցաբերեց ու դրվատանքի արժանացրեց իր գրական առաջին փորձերը կատարող Չապել Եսայանին (այն ժամանակ՝ Հովհաննիսյան). նրան ջերմությամբ ողջունեցին Արշակ Չոպանյանը, Արտաշես Հարությունյանը, Թեոդիկը և այլք, որոնք միանգամից նկատեցին հոգեբանարվեստագետի ստեղծած կերպարների համոզիչ ու իրական լինելը, մատնացույց արեցին գրագիտուհու առինքնող և անսեթևեթ ոճը, որը հետագայում հարստացավ եվրոպական, մասնավորապես ֆրանսիական գեղարվեստի լավագույն ավանդույթներով:

Խորհրդահայ իրականության մեջ գրականագիտական միակ ամբողջական ու իրապես հաջողված փորձը թերևս Սևակ Արզումանյանի Չապել Եսայանին նվիրված մենագրությունն է¹, որտեղ միասնաբար ներկայացված են գրողի կյանքն ու ստեղծագործությունը: Խորհրդային կադապարված գաղափարախոսությամբ պարուրված այդ ուսումնասիրության մեջ հասկանալի պատճառներով, սակայն, հավուր պատշաճի չէին կարող ներկայացվել հեղինակի գեղարվեստական մտածողության առանձնահատկությունները:

Հայ ժամանակակից գրականագիտության մեջ, որտեղ, հուրախություն մեզ, ուսումնասիրողն այլևս կադապարված չէ որևէ գաղափարախոսությամբ, նոր հետաքրքրություն է առաջացել Չապել Եսայանի նկատմամբ. վերահրատարակվում են նրա գրքերը, հոդվածները, թվայնացվում և էլեկտրոնային տարբերակով ընթերցողին են ներկայացվում հեղինակի կենսագրական տվյալները: Այս ժամանակահատվածում Եսայանի մասին ուշագրավ խոսք է ասվում գրականագետ Ալ. Մակարյանի «Չապել Եսայանի «Միլիտարի պար-

¹ Տե՛ս Արզումանյան Ա., Չապել Եսայան, Երևան, 1965:

տեզներ»-ը» ծավալուն հոդվածում¹, որտեղ, սխալված չենք լինի, եթե նշենք, որ ներկա իրականության մեջ առաջին անգամ գիտականորեն պատճառաբանված ու լրջամտորեն վերլուծվում է Եսայանի գեղարվեստը, և ընթերցողի ուշադրությունը սևեղվում է այն նորարարությանն ու թարմությանը, որը հայ գրականության մեջ մտցրեց Սորբոնի համալսարանի գրականության և փիլիսոփայության դասընթացներին մասնակցած ու ժամանակի եվրոպական գրականությունը գոց իմացող հայոց թերևս ամենամեծ գրագիտուհին:

Հիշյալ երկու աշխատություններն այսօր շահեկանորեն օգնում են պատկերացում կազմելու Եսայանի՝ գրականության մեջ ունեցած մեծ ավանդի և վիթխարի ժառանգության մասին, ցույց են տալիս նրա պատկերավոր մտածողությունն ու գեղարվեստական բարձր ճաշակը: Այդուհանդերձ, մինչ օրս ընթերցողն ամփոփ պատկերացում չունի Եսայանի՝ պատմական թեմաներով գրված երկերի մասին, որոնք իրականության և գեղարվեստի զարմանալի միաձուլմամբ ներկայացնում են Օսմանյան կայսրությունն ու Խորհրդային Հայաստանը, ծանոթ չէ սոցիալական թեմայով գրված նրա երկերին, որտեղ բեկվում են մարդկային ամենատարբեր ճակատագրերը, և կնոջ իրավունքների ու դրանց ավանդական ընկալումների մասին ներկայացվում են դրամատիկ պատմություններ և այլն: Նշենք նաև զանազան արխիվներում պահվող նրա նամականուր և հրապարակախոսության մասին, որոնց միջոցով ամբողջանում է Չապել Եսայանի՝ Չոպանյանի բնորոշմամբ՝ «արևմտահայ գրականության ամենեն ամբողջ հաջողության» կերպարը:

Պատմության գնահատականը

1930-ականների սկիզբը, երբ անհատի պաշտամունքը դեռ ավերիչ ազդեցություն չէր ունեցել մտավորականության վրա, Խորհրդային Հայաստանում ապրող և ստեղծագործող Ջ. Եսայանի համար կարծես հարմար ժամանակահատված էր տարիների հեռվից վերստին գեղարվեստականացնելու անցյալը, արթնացնելու մանկական հուշերը և կատարելու պատմության գնահատումը, իսկ դրա լավագույն արտահայտչաձևը ինքնակենսագրական պատումն էր, որի մասին Մ. Բախտինը գրել է. «Ինքնակենսագրության օբյեկտը ոչ միայն սեփական անցյալի աշխարհն է՝ հասուն գիտակցականի և հասկացման լույսի ներքո՝ հարստացված ժամանակային հեռանկարներով, այլև այդ աշխարհի նախկին գիտակցումը և գնահատումը»²: Սրան ավելացնենք նաև, որ 1920-1930-ական թվականների խորհրդահայ գրականության մեջ աննախադեպ հետաքրքրություն առաջացավ ինքնակենսագրական պատումի նկատմամբ. մեկը մյուսի հետևից լույս տեսան Ստ. Զորյանի, Գ.

¹ Տե՛ս **Մակարյան Ա.**, Չապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ»-ը // **Եսայան Ջ.**, Միլիտարի պարտեզները, Երևան, 2018, էջ 154-197:

² **Бахтин М.**, Вопросы литературы и эстетики, Москва, 1975, с. 455.

Մահարու, Ա. Բակունցի և այլոց ինքնակենսագրական երկերը, որտեղ հեղինակները կարոտով ու վառ գույներով (իսկ երբեմն նաև իդեալականացված) էին ներկայացնում անցյալը՝ փորձելով գեղարվեստի շնչով վերակառուցել իրենց կորուսյալ մանկությունն ու հայրենիքը: Եվ ահա այս համապատկերում Ջ. Եսայանը 1934 թ. տպագրեց «Կրակե շապիկը» վերտառությամբ վիպակը, որը հիշյալ հեղինակների ինքնակենսագրական երկերից էականորեն տարբերվում է իր հանրային-քաղաքական նշանակությամբ և պատկերվող երևույթների պատմական գնահատմամբ:

«Կրակե շապիկը» ժամանակակից բանվորական կյանքի ռեալիստական փայլուն արտացոլումն է: Հեղինակին հաջողվել է հերոսների բավական նեղ շրջանակում պատկերել իր ժողովրդի կյանքն ու կենցաղը: Եսայանն իր պատումն սկսում է առանց ավելորդ նախաբանի, զգացական պատմության, որի շնորհիվ ընթերցողը միանգամից հավատ է ընծայում ստեղծագործությանը և դառնում պատմական դեպքերի ականատեսը: «Այն ժամանակ հազիւ տասը տարեկան էի,– գրում է նա: – Մենք կը բնակէինք Սկիւտար, միայրկ, խարիւլած ու փայտաշէն տուն մը, որ կը գտնուէր Բիւլբիւ Տէրեսիի վերելք երկարող տուներու մէջ»¹:

Սա Եսայանական պատումի առաջին առանձնահատկությունն է, հեղինակ-ընթերցող ուղիղ կապն ստեղծող հիմնավոր քայլը: Հատկանշական է, որ վիպակի տպագրման ժամանակ գրողն ուներ արդեն բավական իմաստնություն ու փորձ, նախորդ տարիներին օգտվել էր պատումի արտահայտման բազմաթիվ ձևերից և նպատակահարմար էր գտել տասնամյակներ առաջ տեղի ունեցած դեպքերը ներկայացնել այս ձևով:

Աղքատության ու թշվառության խորհրդանիշ *կրակե շապիկը* հագածների մեջ մարել են ուրախության և հոգեկան անդորրի այնքան ցանկալի կայծերը: Ոսկեծամ, անհոգ, աշխարհի ցավերին ու անարդարություններին անհաղորդ, շատ անգամներ կարոտով, երջանկությամբ և վերապրելու սրտաբուխ ցանկությամբ նկարագրվող մանկությանը հեղինակը հակադրել է չքավորության, հիվանդության ու անմարդկային պայմաններում ընթացող մանկության դառը հուշերը: «Չեմ հիշեր մայրական գորովոտ բույր մը, կամ ժպիտ մը: Ա՛յ, թող ըսեն ինչ վոր կուգեն թող խոսին ու գրին մանկության քաղցր հիշողություններու վրա... Ատոնք անծանոթ են անոնց, վոր ակռաները սեղմած, կուրծք կուրծքի անդադար կկովին կյանքի դժվարություններու դեմ»,– տարիներ անց պետք է գրեր հեղինակը՝ հաստատելով այն պարզ իրողությունը, որ կրակե շապիկ հագածների մեջ բնականաբար չէին կարող գոյատևել քնքշանքն ու գորովը, զգացմունքներին տրվելու ցանկությունը:

Բանվորի հասարակ ընտանիքում կատարվող դեպքերը հուզիչ են ու տպավորիչ, սակայն միայն սրանց նկարագրությամբ չէր կարող բավարար-

¹ Եսայան Ջ., Կրակե շապիկը, Երևան, 1934, էջ 1:

վել ըմբոստ հոգի ունեցող արձակագրուհին: Տեսնելով տիրող անարդարությունները և ապրելով սոցիալական սուղ պայմաններում՝ վիպակի հերոսները որոշում են պայքարել, միավորվել մեկ դրոշի շուրջ՝ վերականգնելով կորսված արժեքները: Ահա այս վերջին իրողության համար տասնապատկվում են վիպակի արժանիքները, որի շնորհիվ նրա ստեղծագործությունը դեռ երկար ժամանակ կմնա արդիական և հոգեհարազատ: Նկարագրելով ժողովրդի թշվառ վիճակը և ցույց տալով դրա հաղթահարման ուղիները՝ Ջ. Եսայանը կատարում է մի շատ կարևոր քայլ, և նրա գրականությունը՝ որպես մի անխարդախ հայելի, ժողովրդի իրական կյանքը արտացոլելուց զատ կոչ է անում դուրս գալ պայքարի, համախմբվել՝ ազատվելով կրակե շապիկից: Ահա սրանով Եսայանը կատարեց այն քայլը, որի բացթողման համար «Կրիտիկա. Սոս և Վարդիթերի» աշխատության մեջ Մ. Նալբանդյանը քննադատում էր Պ. Պռոշյանին¹, այն է՝ նմանատիպ մտքերը՝ պայքարի դուրս գալու մասին, եղել են գրականության պատմության անբաժանելի մասնիկը և բոլոր ժամանակներում արդիական են մնացել: Նաև սա է վիպակի հարատևության առհավատչյան:

Ի դեպ, թուրքական իշխանությունների դժնի լծի տակ կքած ժողովրդի ծանր վիճակի մասին Ջ. Եսայանը պատմում է նաև իր ստվարածավալ «Բարպա Խաչիկ» վեպում, որտեղ պատանի Միհրանի՝ երկրում տիրող անարդարությունների և ապօրինությունների մասին տված հարցերին կար միայն մեկ պատասխան՝ սա Թուրքիան է: Այս երկու ստեղծագործությունները միմյանց լրացնում են. հիշյալ վեպի հերոսներից մեկը, գտնվելով հոգեկան տվայտանքների մեջ, մեծ ցավով ասում է. «Մենք այս երկրին մեջ բուռ մը մարդիկ ենք, որ ակռաներիս սեղմած, մեր արյունեն արյուն քաշելով կդիմանանք կոր հույներու, ֆրենկներու մրցումին...»²:

Կերպարվեստը

Հավատարիմ մնալով ժանրի պահանջած սկզբունքներին, այն է՝ սահմանափակ թվով հերոսներ և դեպքերի համեմատաբար սեղմ պատկերում՝ արձակագրուհին արժարժել է համամարդկային նշանակություն ունեցող խնդիրներ՝ համոզված, որ իրենց բաժին հասած ծանր բախտի ընձեռած հոգեմաշ պտուղների համն զգում են նաև հազարավոր այլ մարդիկ աշխարհի բոլոր կողմերում: Քննելով վիպակում գործող անձանց կերպավորման հարցը՝ նկատենք, որ Եսայանական գրեթե բոլոր կերպար-հերոսները ինքնարտահայտվում են իրենց գործողություններով, և հեղինակը շատ քիչ է նրանց գնահատականներ տալիս: Այլ կերպ ասած՝ ընթերցողը կերպարների բարո-

¹ Տե՛ս **Նալբանդյան Մ.**, Կրիտիկա. «Սոս և Վարդիթերի», Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1983, էջ 169:

² Տե՛ս **Եսայան Ջ.**, Բարպա Խաչիկ, Երևան, 1966, էջ 130:

յական արժեհամակարգին ծանոթանում է՝ հետևելով նրանց գործողություններին, ուստի ստեղծագործության դիպաշարը և կերպարների հոգեբանական համոզականությունը կքննենք միասնաբար:

Ստեղծագործության կենտրոնական հերոսներից է հիշյալ ընտանիքի մայրը՝ Նունիկը, որը վիպակի սկզբում պատկերված է մռայլ, խիստ, կյանքի հոգսերի տակ կքած կնոջ կերպարում: Նա, ըստ երևույթին, կրակե շապիկի օղակներում տանջվող առաջին հերոսն է, որն ընտանիքի ամենօրյա արուստը հոգալու համար պայքարի դուրս ելած մարդկանց առաջին շարքերում էր կանգնած, գաղափարական պայքարի, ազատատենչ գաղափարների առաջամարտիկն ու լավագույն ջատագովն էր: Այստեղ կինը չի կատարում երկրորդական դեր, և իր ծավալած գործունեության կարևորությունը երբեք չի ստորադասվում: Հեղինակին հաջողվել է տիպականացնել կերպարը՝ նրա մեջ ներմուծելով այն ժամանակվա հայ կնոջ և Օսմանյան կայսրության այլազգի քաղաքացու լավագույն գծերը: Ավելին՝ գնալով որոշակի սրացումների և բևեռացումների ճանապարհով՝ Եսայանը ցույց է տվել, թե ինչպես են ծանր իրականության տակ կքած կնոջ միջից վերանում քնքշանքն ու նրբությունը: Այսպիսով՝ ի դեմս Նունիկի, այս վիպակում գործ ունենք տիպականացված կամ հավաքական կերպարների հետ:

Նունիկի կերպարը լրացնելու է գալիս ընտանիքի հայրը՝ պահպանողական հայացքների տեր մի մարդ, որի ուսերին էր ծանրացած ընտանիքի գոյատևման խնդիրը, մարդ, որն ամեն հնար գործադրում էր ընտանիքի հանապազօրյա կարիքները հոգալու համար, ինչի շահերը ելնելով՝ սովորաբար չէր հաճախում զինետներ և դրանով ընտանիքի անդամներին բախտավոր զգալու երջանկություն էր պարգևում: Իսկ վերջիններս իրենց համեմատում էին այն ընտանիքների հետ, որոնց «հայրը գինետունը կթողուր վաստակը»: Աստիճանաբար լայնանում է խեղված ճակատագրեր ունեցողների շրջանակը: Կարպիսը՝ վիպական գործողություններն իր անունից վարող հերոսը, դպրոցում ծանոթանում է Պետիկի հետ, որը պատմում է իր հորեղբայր Արտաշեսի մասին, որի անվան հետ է կապվում ազգային-ժողովրդական վերածնունդը: Վիպակում Արտաշեսն աստիճանաբար դառնում է բանվորական շարժման պարագլուխն ու առաջին դեմքը: Նա վիպակի ընտրյալ հերոսն է, որին նմանվել է ցանկանում Կարպիսը՝ աշխարհում արդարություն հաստատելու համար: Թեև վիպակը, ինչպես արդեն նկատեցինք, հայկական ռեալիզմի դրսևորումներից է, սակայն Կարպիսը կարծես ռոմանտիկ հերոս է, որի բախումը իրականության հետ ավելի ցայտուն է:

Եսայանը, շատ լավ հասկանալով իր կերտած գրական հերոսների հոգեբանությունը, կարողացել է խորացնել դրանց վերլուծության շրջանակները: Ցույց տալով կերպարների՝ առանց ավելորդ պճնանքի և սերնեթանքի աստիճանաբար խորացող ընթացքը (դա բնորոշ էր արևմտահայ կին հեղինակ-

ներին)՝ Հակոբ Օշականն իրավացիորեն գրում է. «Տիկին Եսայան հոգեբանական վեպին անվիճելի վարպետն է»¹:

Նկարագրվող դեպքերը տեղի են ունենում ձմռանը. քանվորական ընտանիքներն ի վիճակի չեն լինում ածուխ գնել տան ջեռուցման համար, նմանատիպ պայմաններում հիվանդանում և մահանում է ընտանիքի երեխաներից մեկը՝ ավելի բորբոքելով ընտանիքի՝ կրակե շապիկից ազատվելու տենչը: Ահա այսպիսի պայմաններում սկսում են նշմարվել պայքարի առաջին կայծերը, քանվորական ընտանիքները հանգանակություն են կազմակերպում ածուխ գնելու համար, նրանց գաղափարական առաջնորդը դառնում է Արտաշեսը, որը զբաղվում է ածուխի ձեռքբերման աշխատանքներով: Գործողություններին դրամատիզմ հաղորդելու և միագծությունից պաշտպանելու համար հեղինակը մի հետաքրքիր բեկում է մտցնում իր պատումի ընթացքի մեջ. դեպքերի զարգացման թելադրանքով Արտաշեսը որոշ ժամանակ առանց զգուշացնելու բացակայում է համայնքից՝ իր մոտ ունենալով ածուխի համար հավաքված գումարը: Դա զանազան մեկնաբանությունների տեղիք է տալիս. ասեկոսեներ են տարածվում Արտաշեսի՝ խաբեբա լինելու մասին, սակայն ժողովրդական շարժման ընտրյալ առաջնորդը, հավատարիմ մնալով իր խոստմանը, բերում է այդքան ցանկալի վառելիքը՝ հույսի նոր հորիզոն բացելով քանվորների տեսադաշտում: Անկասելի էր ազատատենչ ժողովրդի կազմակերպած շարժումը, սակայն կատարվում է այն, ինչը մի նոր ուղղություն, նոր հնչեղություն է հաղորդում վիպակին. վրա են հասնում ոստիկանները, ձերբակալում քանվորներից մի քանիսին, հետախուզում և գտնում են ածուխի պահեստները՝ ամբողջ վառելիքը խլելով ժողովրդից: Սա արդեն պետության միջամտությունն էր քանվորների ձեռնարկած աշխատանքներին, որոնք բնավ հակաօրինական չէին, այսինքն՝ թուրքական իշխանությունները պետական մակարդակով էին ճնշում հայ աշխատավորի՝ բարեկեցիկ կյանքով ապրելու ձգտումը... Պատահական չէ, որ պատկերվող դեպքերից տասնամյակներ անց՝ 1920 թ. օգոստոսին, Կիլիկիայում հայ որբերի հարցերով զբաղվող ազգային պատվիրակության կազմում գտնվող Ջ. Եսայանը նույն պատվիրակության նախագահին գրում էր. «Թուրքական ռեժիմի վերադարձած հողամասի մը մեջ ոչ կարող ենք մեր ազգային հաստատությունները պահել, ոչ մտավորական կյանք ունենալ և ոչ ալ պահել այնտեղ այնպիսի անձնավորություններ, որոնք կոչված են ժողովուրդին դասիարակությունը լրացնել, մեկ խոսքով մենք պետք է հրաժարինք մեր ազգային կյանքեն և հպատակություն հայտնենք թուրքերուն և ջանանք իջնել իրենց մակարդակին, որպեսզի վերջիվերջո հանգիստ թողուն մեզ. այդ պարագային ալ անշուշտ չի պիտի պակսին կասկածները և դավե-

¹ Օշական Հ., Հայ գրականություն, Երուսաղեմ, 1942, էջ 484:

րը, որոնք շարունակական վտանգի մեջ պիտի պահեն հայ ժողովուրդը»¹:

Վիպակում խիստ բնութագրական ձևով է ներկայացվում նաև հայ հոգևորականի կրավորական կերպարը: Ճիշտ է, դա կատարվում է ընդհանրական կերպով, և ըստ պատշաճի չի ներկայացված որևէ հոգևորականի ամբողջական կերպար, սակայն հեղինակը կարողացել է ներկայացնել հայոց թշվառության և անգործության պատճառներից մեկը:

Կրակե շապիկը թեժանում էր՝ այրելով համանուն վիպակի հերոսներին, բայց կար ավելի ցավալի մի երևույթ. Արտաշեսին մատնել էր իր եղբայրը՝ Պետիկի հայրը, ինչի համար Պետիկը, չցանկանալով տեսնել հոր երեսը, հեռանում է տնից: Սրանով մատնացույց են արվում ազգային դժբախտություններից ամենաճակատագրականները՝ երկպառակությունն ու մասնատվածությունը, միասնական գաղափարի բացակայումը: Ժողովրդական շարժումը մարում է, և որոշ ժամանակ անց սուլթանը ներում է շնորհում, ձերբակալված բանվորները վերադառնում են իրենց տները՝ բացի Արտաշեսից և երկու վարժապետներից, որոնց ուղարկում են այլ գավառներ՝ մեկուսացնելով Սյրուտարից՝ կատարվող դեպքերի կենտրոնից: Հուսալքության քողը, սակայն, ըստ երևույթին, երբեք չի պարուրում հերոսներին. վիպակի վերջում դեպքերն ամփոփվում են հետևյալ նախադասությամբ. «Յե՛վ անգամ մըն ալ ցասումի արցունքներ ժայթքեցին մորս աչքերեն»: Այո՛, արցունքները պարունակում են ոչ թե հուսալքում և հնազանդություն, այլ ցասում, ուրեմն դեռ ամեն ինչ չէ, որ ավարտված է, դեռ պատգամ կա՝ ուղղված սերունդներին, ցասումն անպայման աչքերից տեղափոխվելու է կապանքագերծ բազուկներ, որոնք կերտելու են ազատատենչ ժողովրդի՝ կրակե շապիկից ազատված գալիքը...

Ժամանակին քննադատությունը նշել է, որ Եսայանը «լավ չի պատկերացնում իր հերոսների փրկության ուղին՝ միաժամանակ հավաստելով, թե «Կրակե շապիկը» ապացույց է, որ տաղանդավոր արձակագրուհին ստեղծագործական իր բեկումն ավելի խորացնելով կարող է վերարտադրել ավելի խոշոր և արժեքավոր գործեր»²: Արդյո՞ք անաչառ է գրականագետ Մ. Մկրյանը: Վիճելի է: Չէ՞ որ եթե ուշադիր հետևենք վիպակի դիպաշարին, կտեսնենք, որ Եսայանը ներկայացնում է շատ կոնկրետ գործողություններ, որոնք իրական հեղափոխության հիմքը պետք է լինեն: Շատ որոշակի են այդ քայլերը

- նույն իրավիճակում գտնվող մարդկանց համախմբում մեկ դրոշի շուրջ.
- պայքարի համար հասարակության բացարձակ հեղինակությունը վայելող առաջնորդի առկայություն.
- հավատ այդ առաջնորդի նկատմամբ.

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 430, ց. 1, գ. 337, թ. 18:

² Մկրյան Մ., Զապել Եսայանի «Կրակե շապիկը» // «Գրական թերթ», 1934, թ. 14:

- շրջապատում գտնվող բոլոր հնարավոր բանասարկությունների և գրպարտիչների քայքայիչ ազդեցությանը չենթարկվելու հոգեկան արիություն:

Մ. Մկրյանին, ըստ երևույթին, չէր բավարարել այն հանգամանքը, որ Եսայանը հերոսների փրկության ուղին չէր կապում խորհրդային իրակաևության հետ, ինչը 1930-ական թվականներին խիստ արդիական էր, սակայն միանշանակ է, որ այս կերպ պետք է խիստ գաղափարականացվեր և գեղարվեստազրկվեր վիպակը:

Գեղարվեստը

Ստեղծագործության համակողմանի վերլուծությունը բերում է այն համոզման, որ հեղինակը միայն իր կենսագրությունը շարադրելու նպատակ չի հետապնդել. ունենալով գեղեցիկի բացառիկ ընկալում՝ Եսայանը կարողացել է ստեղծել գեղագիտական նշանակություն ունեցող պատկերներ: Բնության տեսարանները, մարդկային դրամատիկ առօրյան, երազանքների և գորշ իրականության բախումը, ենթարկվելով գեղագետի գրչին, ընթերցողի դիմաց ներկայանում են իբրև բանաստեղծական պատկերներ, առանց որոնց անհնար է պատկերացնել գրական երկը. հեղինակը կենսական շատ մոտիվներ ներմուծում է նկարագրությունների, ցավի, մարդկային տառապանքի հնչյունների միջոցով: Պատումի յուրահատկությունը դրսևորվում է նաև այն պարզ, ոչ խճողված նախադասություններում, որոնցով հեղինակը, ապահովելով անմիջական կապ իր և ընթերցողի միջև, չի խորանում անիմաստ մանրամասնությունների մեջ՝ միաժամանակ վիպակի ընձեռած հնարավորությունների սահմանում ամբողջովին պատկերելով ամբողջ ժամանակաշրջանն ու տիրող բարքերը: Ստեղծագործության ամեն տողում պարզորոշ երևում է կրթված և մտավոր բացառիկ կարողություններ ունեցող արվեստագետ հեղինակը, որը, լինելով գրականության՝ իբրև խոսքարվեստի մեծագույն վերպետը, կարողացել է խոսքը հասցնել ճիշտ նշանակետին՝ ընթերցողի սրտին:

Ազնվությունն ու օբյեկտիվ վերլուծությունը, իհարկե, պահանջում են ասել, որ վիպակը բնավ չի հավակնում զերծ մնալ որոշ թերություններից ու բացթողումներից. ստեղծագործության հերոսների ուղին (բայց ոչ ամբողջ վիպակի ընթացքն ու առավել ևս ավարտը) կարծես կանխորոշված է. նրանք բոլորը ծառայում են մեկ նպատակի: Ազգային-ժողովրդական վերածնունդը կերտող հերոսներից շատերը, ցավոք, չեն երևում իրենց ընտանեկան միջավայրում, նրանց ծավալած գործունեության ընթացքի արահետը երբեք չի բեկվում, վերելքների ու անկումների, նվաճումների ու կորուստների ճանապարհն այդպես էլ խորթ է մնում նրանց: Ահա այս ճանապարհին էր, որ հեղինակը պետք է հարստացներ գրական հերոսներին բնորոշ հոգեբանական վայրիվերումները, ինչը կապահովեր դրամատիկ և ազդեցիկ դիպաշար:

Հատկանշական է, որ վիպակը տպագրվելուց ընդամենը երկու տարի անց այն թարգմանվում է ռուսերեն և ադրբեջաներեն (անկասկած է, որ

թարգմանությունների շրջանակը կընդլայնվեր, եթե չարգելվեր գրական այս մեծ նվաճման տարածումն ու ուսումնասիրումը)՝ սրանով ապացուցելով, որ Կ. Պոլսի հայ բանվորների ճակատագիրը հարազատ է այլ ժողովուրդներին ևս, իսկ այդ ճակատագրերը գրական դիպաշարի միջոցով ներկայացնող գրագիտուհու համբավը չի շրջանակվում մի ժողովրդի ունեցած սահմաններում: Ահա այստեղ է, որ տեսանելի է դառնում վիպակի գեղագիտական կողմի կարևորությունը, որի ընկալումը նույնական է բոլոր ժողովուրդների մոտ: Ակնհայտ է, որ վիպակը ազգային գրականության ծնունդն է. նրա յուրաքանչյուր էջում պարզորոշ երևում են հային բնորոշ հոգեկան ըմբոստություններն ու ցավերը, անխոնջ պայքարն ու նվիրումը, մորմոքն ու կսկիծը, սակայն այս փաստը բնավ չի շրջանակում նրա տարածման ուղիներն ու վայրերը. հայտնի է, որ իսկական գրականությունը միայն ազգային ձևի մեջ է դրսևորում իր համամարդկային բովանդակությունը:

Վիպակի գեղարվեստական արժանիքներից են նաև այն նախադասությունները, որոնց շնորհիվ կենդանի գույներ են ստանում նկարագրվող դեմքերն ու դեպքերը, առարկաներն ու երևույթները. պատմելով հոր մասին՝ հեղինակը նկարագրում է նաև նրա կոշիկները, որոնք ասես լրացնում են հոր կերպարը. «Յեվ ինչ որ իր աչքերը չէին արտահայտեր, ինչ որ իր շրթները չէին արտասաներ, կարծես կգրվեյին այդ կոշիկներու վրա. իր հոգիի շարժումները, իր թագուն ըմբոստությունները և իր անսահման գորովանքը իրեններուն համար կդրոշմվեյին այդ ցավագին, այդ տրտում կոշիկներու վրա»: Ժողովրդի կենցաղի նկարագրություններն ամբողջացնում են առածասացվածքները. «Հարուստին խորոզը (աքլոր) անգամ հավկիթ կածե»: Հեղինակը կարողացել է հերոսներից մեկի դիպուկ նկարագրությամբ ցույց տալ ամբողջ ժամանակաշրջանը և մուսուլմանի ծանր լծի տակ կքած ժողովրդի ողբերգական ներկան. «...բռնի կմահմետականացնեն, տուրքերու գանձումի պատրվակով կկեղեքեն, կթալլեն, կսպանեն, աղջիկները կփախցնեն...», և այս ամենը, կրկնում ենք, վիպակում ներկայացված է ոչ թե հեղինակի մերկապարանոց և ուղիղ խոսքով, այլ իբրև ստեղծագործության հերոսներից մեկի մտորում, ինչը հարստացնում և գեղարվեստականացնում է Ջապել Եսայանի պատումի արվեստը:

Айк Оганнисян – Эпоха и люди в романе Забел Есян «Огненная рубашка»

«Огненная рубашка» – это автобиографическая повесть З. Есян, в которой автор представил жизнь армян и армяно-турецкие отношения в Константинополе. Роман выделяется своей системой образов и оценкой исторический событий. «Огненная рубашка» имеет важное значение для оценки творчества З. Есян – репрессированного и в настоящее время мало изученного автора.

Hayk Hovhannisyan – *The Era and People in the Novel “Shirt of Fire” by Zabel Yesayan*

“Shirt of Fire” is an autobiographical novel by Zabel Yesayan where the author represents the life of Armenians in Constantinople and Armenian-Turkish relationships. The novel transcends artificial illustrations and historical events parallel to the development of the events. The main importance of the novel “Shirt of Fire” is the author herself and her less analyzed creations.

Ներկայացվել է 09.07.2020

Գրախոսվել է 16.08.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020